ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ապրիլի 2025 թվականի № 6

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 11.02.2015 Թ. ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի № 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 17-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ ներքին գործերի նախարարի 12.02.2025 թ. № 15-Լ հրամանի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. Հաստատել ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրում լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 11.02.2015 թ. որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրում վերապատրաստման գործընթացի կազմակերպման կարգը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

«ՀԱՎԵԼՎԱԾ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի
«01» 04. 2025 թ. թիվ 6 որոշման

Կ Ա Ր Գ
ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

1. ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրում (այսուհետ՝ կրթահամալիր) լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցման կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է վերապատրաստման, հատուկ պատրաստություն անցնելու, գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացը:

2. Կրթահամալիրում լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցում անցնող անձինք համարվում են սովորողներ (այսուհետ՝ սովորող):

3. Սույն կարգի դրույթները տարածվում են նաև ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի կողմից որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրով դասընթացների վրա:

4. Լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցման կազմակերպման հիմնական փաստաթղթերն են՝

1) ուսումնական պարապմունքների հաշվառման մատյանը,

2) քննական (ստուգարքային, դիֆստուգարքային) տեղեկագիրը և թերթիկը:

5. Սովորողների գիտելիքների մակարդակի ստուգման և լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցման արդյունավետության գնահատման նպատակով՝ ուսումնական պարապմունքները սկսելուց առաջ սովորողները կարող են անցնել նախնական թեստավորում, իսկ ուսումնական պարապմունքներն ավարտելուց հետո մինչև ստուգարքների և քննությունների հանձնումը՝ հետագա թեստավորում: Թեստավորման առաջադրանքները կազմվում են առարկայական թեմատիկ պլանի հիման վրա:

6. Լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցման պարապմունքներն անցկացվում են հետևյալ դասավանդման ձևերով՝

1) դասախոսությունը,

2) սեմինար պարապմունքը,

3) գործնական պարապմունքը:

7. Գործնական պարապմունքները կարող են իրականացվել նաև ՀՀ ներքին գործերի նախարարության ստորաբաժանումներում:

8. Ուսումնական պարապմունքների դասացուցակը կազմվում է վերապատրաստման (այդ թվում՝ տարեկան ժամանակացույցից դուրս վերապատրաստումների) տարեկան ժամանակացույցի, ուսումնական պլանից բխող առարկայական թեմատիկ պլանների հիման վրա: Դասացուցակը ներառում է յուրաքանչյուր խմբի պարապմունքների անցկացման ժամանակի, տեսակի, ինչպես նաև դասավանդող անձանց մասին ամբողջական տեղեկատվություն:

9. Լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցման ընթացքում անցկացվում է սովորողների գիտելիքների (հմտությունների) ընթացիկ և ամփոփիչ գնահատում՝ համաձայն ուսումնական պլանի: Սովորողների գիտելիքների (հմտությունների) ամփոփիչ գնահատման ձևերն են՝ ստուգարքը, դիֆերենցված ստուգարքը և քննությունը:

10. Ամփոփիչ գնահատումն իրականացվում է ամբողջությամբ՝ տվյալ առարկայի կամ դրա առավել կարևոր մասի (բաժնի) յուրացման աստիճանը որոշելու, տեսական գիտելիքները, գործնական ունակությունները և հմտությունները պարզելու համար: Ամփոփիչ գնահատումը կարող է իրականացվել նաև համալիր քննության ձևով՝ ուսումնական պլանով նախատեսված մի քանի առարկաներից:

11. Ստուգարքը կարող է անցկացվել տոմսերով կամ ամբիոնի որոշմամբ՝ առանց տոմսերի՝ հարցազրույցի կամ թեստավորման միջոցով: Քննությունը (դիֆերենցված ստուգարքը) անցկացվում է տոմսերով, որը կարող է պարունակել տեսական հարցեր և (կամ) գործնական առաջադրանքներ (խնդիրներ), այդ թվում՝ թեստեր:

12. Ամփոփիչ գնահատումն իրականացվում է տվյալ առարկայի դասավանդմանն ներգրավված անձի կողմից: Վերջինիս բացակայության դեպքում ամփոփիչ գնահատումն իրականացվում է ամբիոնի պետի կամ վերջինիս որոշմամբ՝ այլ մասնագետի կողմից:

13. Ամփոփիչ համալիր քննությունն իրականացվում է դասախոսական կազմի կողմից:

14. Սովորողների գիտելիքների (հմտությունների) ամփոփիչ գնահատման համար կիրառվում է հետևյալ սանդղակը՝

Գնահատման միավոր	***Գնահատականը տառանշումով***
18 - 20	Գերազանց
13 - 17	Լավ
8 - 12	Բավարար
0 - 7	Անբավարար
0	Չներկայացած

15. Քննական (դիֆստուգարքային, ստուգարքային) տեղեկագիրը նույն օրը ներկայացվում է ոստիկանական ուսումնական ստորաբաժանման վերապատրաստման կենտրոն:

16. Վերապատրաստման դասընթացը հաջողությամբ ավարտելու դեպքում ՀՀ ՆԳՆ ծառայողներին տրվում է ՀՀ ներքին գործերի նախարարի 12.02.2025 թ. № 15-Լ հրամանով սահմանված նմուշի վերապատրաստման վկայական: Հատուկ պատրաստության ձևով լրացուցիչ կրթական ծրագրով դասընթացն անցած սովորողներին տրվում է սահմանված նմուշի վկայական (ձև 1)՝ համաձայն հավելվածի:

17. Մինչև երկու առարկայի քննությունից, դիֆստուգարքից կամ ստուգարքից անբավարար գնահատական ստանալու դեպքում սովորողներին թույլատրվում է դրանցից յուրաքանչյուրը վերահանձնել մեկ անգամ:

18. Ուսումնական պարապմունքների մատյանում սովորողի ընթացիկ առաջադիմությունը գնահատվում է հինգ բալային համակարգով:

19. Լրացուցիչ կրթական ծրագրով դասընթացի ընդհանուր ժամաքանակի մեկ երրորդից ավելի անհարգելի կամ այդ ժամաքանակի կեսից ավելի հարգելի բացակայություն ունեցող, նույն առարկայից երկու անգամ կամ երեք առանձին

առարկայի քննությունից, դիֆստուգարքից և ստուգարքից անբավարար գնահատական ստանալու դեպքում սովորողը՝ ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ռեկտորի հրամանով համարվում է լրացուցիչ կրթական ծրագրով ուսուցում չանցած:

20. Սույն կարգի 19-րդ կետով նախատեսված դեպքերում ՀՀ ՆԳՆ ծառայողներին՝ ՀՀ ներքին գործերի նախարարի 12.02.2025 թ. № 15-Լ հրամանով սահմանված նմուշի վերապատրաստման վկայական չի տրվում:

Ձև 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

Սույն վկայականը տրվում է _____

_____

_____

_____

_____

առ այն, որ նա ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում _____ անցել է

(ժամանակահատվածի սկիզբը և ավարտը)

_____

_____

_____ դասընթացը:

Հետևյալ առարկաներից (մոդուլներից) հանձնել է ստուգարքներ, դիֆերենցված ստուգարքներ և քննություններ

Հ/Հ	Առարկայի (մոդուլի) անվանումը	Ստուգարքների, դիֆերենցված ստուգարքների և քննությունների արդյունքները
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր

_____ _____

(ստորագրությունը) (անուն ազգանուն)

Կ.Տ.

«____» _____ 20 թ.